

# — Ա Յ Ո Ւ Յ —

## 1.2. ՏԱՐԻ - ՆՅՐ ՇՐՋԱՆ

1962

◀ Ցույփ ▶

Թիւ 7

ԽՄԲԵԳՐԸԿԱՆ

### ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԼՈՅՍ ՀԱԻԱՏՔԸ

ՄԱԴԱԳԻԱ. ԾԱՌԱՅՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱԴՐԵՄԻԱՓԵԱՄԻ ԱՎՏԱԽԵՎԵ ՀՈՐ ԵՒ ԵՆԻՐՃԻ

Ս. ՀԱՎԻԿԵՎԵ ԵՒ ԿԱՄՈՔ ԱՋԿԻ ԱՐԳԵՎԻՇԽԵՎՈՒՄ

Կ. ՊՈԼՈՅԵ ԵՒ ՊԱՏԻՄՐԻՔ ՀԱՅՈՅ ԹՈՒՐՔԻՒՑ

ԿՈՐՄԱԿԻՑ ԵՂԲԱՐՑ ՄԵՐՈՅ ԲԱՐԵՆԱԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԵՒ ԲԱՐԵԶԱՆ ՏԵՂԱՊԱՀԱՑ ԵՒ  
ԲԱՐԵԿԱՐՑ ՎԱՐԱՎԱՐՑ ԵՒ ԸՆՏՐԵԼԱԿԻՑ ՊԱՇՏՈՆԱԿՅԱՅ. ԳԵՐԱԾՆՈՐԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԵՒ  
ՀՈՒԵՆՈՐԸ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ԵՒ ԲԱՐԵՆՈՐԸ ԳԱՀԱՆԱՑԻՑ ԵՒ ՀԱՄՈՐԵՆ ՊԱՏՈՎԱԿԱՆ ՈՒԽՏԻ  
ՀԱՅԱՏԱՆԵԱԹԵՍ ՈՒՂՂԱՓԱՌ ՄՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՂՉՈՅԵՆ ԵՒ ՍԵՐ ԲԱԶՄԱՑԻ Ի ՏԵՐ  
ՑԻՈՆԻ ՔՐԻՍՏՈՍ

Երբ ամսով յառաջ յատուկ շրջաբերական կոնդակով կը յորդորէինք  
զձեղ, Եղբարք Սիրեցեալք, ձեր կոչման և պարտաւորութեան համեմատ խօ-  
սիլ, քարոզել, խրատել, լուսաւորել և զաւանդութիւնն զոր ընկալաք՝ ժողո-  
վրդեան ալ ուսուցանել, առիթ ունեցած էինք ակնարկել ցաւով որտի թէ կան  
դժբաղդաբար այնպիսիներ որք յաւակնած են մեր Ս. Հարց խօսքերը զիրքերու  
մէջ սրբազրել, Եկեղեցւոյ մէջ փոփոխել և մեկնութեանց ներքե այլայլել, որք  
երբ մեր Ս. Հարց գաւանութիւնը ներկայել կը ձեացնեն, իրօք մեր Ս. Հարց  
դաւանութիւնը կ'այլայլեն: Թէպէտ և ի սկզբանէ անտի շեն պակսած մեր Աւգո-  
ղափառ Ս. Եկեղեցւոյ անստերիք զարդապետութեան ջատագովներ, որք ի  
դամում և թէ ի նորումս և նաև ի վերջնումս լուսաւոր կերպով բացատրած են  
Ս. Հարց խօսքերուն ուղիղ իմաստները և ցրած են այն խօսքերուն արուած  
դամածուռ մեկնութիւնները, ուղղած են կրմատուած վկայութիւնները և ճըշ-  
դամածուռ մեկնութիւնները, ուղղած են կրմատուած վկայութիւնները և ճըշ-

կառակորդներ չեն դադարիր հին ըստածներն նորոգել, և անդամ մը հերքուած ցուցմունքները կրկնել, և անյարժար վկայութիւնները վերտափն յառաջ բիրի՞ որպէս զի մեր Ս. Եկեղեցին անարդեն և նախատեն, մեզ ալ պարագ կր գտնայ չատագովական չանքերը չխնոյել, և խօսիլ և զրել ի պաշտպանութիւն մեր Ա. Եկեղեցւոյն և ուղիգ հաւատոյն, և փորձուած հարուածներուն դիմաց պաշտ պանողաբար դիմադրել:

Արդ զիտնալով հանդերձ, թէ ինչ որ մենք կարենանք ըսել՝ մեր նոր զիւտերը չենք, և թէ մեր Ս. Հարց ուղղափառութեան պաշտպանութիւնը նոր չատագովաւթեան չի կարօտիր, այլ որովհեակ նոր գայթակղութիւն յարւցանե. լու ճիզ բնողներ կան, և մեր Ս. Հարց դաւանութիւնը ոյլայլելու նորանոր փորձեր կ'ըլլան, կը կարծեմք թէ չեմք կրնար արդարանալ՝ մեր լուսութեան մէջ ուրիշներէ կանխաւ զրուած և խօսուած լինելուն համար. և ոչ ալ մեզմէ առա ջիններուն արդիւնաւորութեամբ մեր պարտականութենէն զերծանիլ. Աւսափ հարկ կը զզամք նորոգեալ առարկութեանց դէմ պատասխանները կրկնել և թիւր իմացուածոց դէմ ուղիլը երեքինել և մեր Ս. Եկեղեցւոյ վարդապետութեան դէմ հրապարակ նետուած սխալ կարծիքները ցրել, որով ո՛չ թէ գուք ալ օգ տըլիք, այլ մանաւանդ զործածէք զանոնք հաւատացեալ ժողովրդեան մէջ հնա րաւոր գայթակութեանց առջևն առնելու ճշմարիտ քարոզութեամբ և ուղիգ մեկնաբանութեամբ:

Այս նպատակով կ'ուղիեմք ձեզ ներկայ շրջաբերականս իբր մեր առա ջին շրջաբերական թղթոյն լրումը, և իբր առ ձեռն բացատրութիւն մը Ա. Գիր քէն և Ս. Հայրերէն առնուած այն վկայութեանց, որք այս օրեր վերտափն մէջ տեղի հանուեցան Հայաստանեաց Առարք և Ուղղափառ Եկեղեցին արհամարհելու և անուանաբերելու նպատակաւ:

Եւ յիրաւի, ո՞վ երբեք կրնայ կարծել, Սիրելի՛ք, թէ տակաւին պիտի գտնուին այնափիսիներ, որք անկատար մտածումով կը խորհին կրօնական իրաց վրայ, և Քրիստոսի Եկեղեցին կը ներկայացնեն այն կերպով որ իրօք անոր նուաստացումն է, և այն զճիտ սէրը՝ զոր Քրիստոս իր Աւետարանի հիմն ըրա՞ք մահամ շահագիտութեանց կը ծառայեցնեն: Փոխանակ Աւետարանի մարդասիրութիւնը լաւ հասկնալու, փոխանակ անոր գսեմ ու գեղեցիկ ոզին ու բարոյականը ամէն անհատի սրտին մէջ տարածելու, փոխանակ մարդուն ազնիւ զզացումներ ներչնչելու՝ զորս Աւետարանը մեր առջև կը դնէ, կը ջանան ընդհակառակն Քրիստոնեայ անհատին մէջէն հեռացնել Աւետարանի այն բարիքները, և անոր տեղ դնել այն սին ու մասփառ ոզին, որ նախատինք է Քրիստոնէութեան և անոր երկնաւոր Հիմնադրին: Մարդասիրական զգացումով մօտեցան Լատին և Կաթոլիկ Եկեղեցականք ալ մեր խիդճերուն և նպաստի բաշխման սկսան, և մեք երախտագիտութեամբ իրենց պատասխանեցինք: Բայց ահա հաց չամբած ատեննին՝ փոխարէն պահանջեցին անսոնց ԼՈՑՍ ՀԱԽԱԾՔ՛, և դրամ տուած տտեննին՝ Եկեղեցին փոխելը պայման գրին, այնպէս որ ուր նպաստաւորեալք այդ պայմանը չգործադրեն, սկսած են նաև դատաստանաւ և բռնի յետս առնուլ առւած ողորմութիւննին: Միւս կողմանէ իրենց այժ տիխուր զոր ծին արդարացում մը տալու համար վարդապետական աեսութիւններու և դա-

ւանաբանական ինդիքներու ալ մտան, և յանդզնեցան յայտարարել թէ Հայ Եկեղեցին Գրիգոր Լուսաւորիչէն սկսեալ մինչեւ Ներսէս Լամբրոնացին Հռովմէական և Հռովմէադաւան, Լատինադաւան և Լատինամիտ եղած է, և թէ Հայերն ալ երբ Հռովմէադաւանութիւն կ'ընդունին անոնց հետևած կ'ըլլան։ Այդ անտեղի կարծիքին պաշտպանութիւնն ալ հրատարակեցին անանուն տետրակով մը որով Մեր Սուրբ Հարց Դաւանութիւնը բացատրել կարծելով, իրապէս զայն այլայլել յանդզնեցան։ Այդ փոքրիկ տետրակը մէկ կողմանէ շատ մը վկայութեանց խօսքեր յառաջ կը բերէ, մանաւանդ մեր Ս. Հարց զիրքերէն, բայց և ոչ մին ուղղութեամբ և ճշմարիտ իմաստով, իսկ միւս կողմանէ Ազգային և վարչական տեսութիւններ կը պարզէ չարամիտ ակնարկութիւններով և անձնագործ պարծենկոտութեամբ զարդարեալ։ Մեր Նպատակը չէ այդ վերջին կէտերուն հետեւի, որք վարդապետական տեսութիւններէ շատ հեռու են, այլ միայն դաւանութեանց և վկայութեանց մասին քանի մը բացատրութիւններ տալ, որպէս զի չըլլայ թէ ոմանց միտքերը պղտորին, կարծելով թէ իրօք մեր Ս. Հարց զիրքերը կը պարունակեն այն իմաստները, զորս տետրակին հեղինակողը բռնազրուելով դրած է անոնց բերնին մէջ։

Նա կը կարծէ թէ Քրիստոսի Եկեղեցին Պետրոսի վրայ շնուած է և հաւատացեալ ըլլալու համար պէտք է ռէռովմայ Եկեղեցւոյն մէջ մանել։ Քրիստոնէական Եկեղեցւոյ բուն ոգոյն և ճշմարիտ վարդապետութեան հակառակ ըլլալէ զտա ողջմտութեան ալ հակառակ է ենթադրել թէ Եկեղեցին Պետրոսի վրայ շինուած ըլլայ։ Մինչդեռ Աւետարանը և բոլոր նոր հոտակարանը կը վկայէն թէ Քրիստոնէական Եկեղեցւոյ միակ Հիմք և Գլուխն ինքն Քրիստոս եղած է։ Իրօք ալ հնար չէր Եկեղեցւոյ մէջ բուն հիմքն զտա ուրիշ հիմ մ'ալ ստեղծել, «Զի հիմն այլ ոչ կարէ զնել քան զեղեալն որ է Յիսուս Քրիստոս» (Ա. Կորնթ., Գ. 11)։ Եկեղեցին Պետրոսին չէ այլ Քրիստոսին է, և ասոր հակառակող ինքնանար վարդապետութիւնը հեռի է նոր հոտակարանի ոգիէն և Քրիստոնէութեան առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ դարերու ճշմարիտ ընդհանրական և համամիտ Աւղագիտա Եկեղեցիէն։ Հեռի է ոչ միայն մեր Ս. Հայրապետներուն և Վարդապետներուն գրուածներէն և ողիէն, այլ նաև բոլոր ուրիշ Եկեղեցեաց Ս. Հայրերու զրութիւններէն և ողջամիտ վարդապետութիւններէն։ Պարզապէս սխալ է Ս. Եկեղեցւոյ յայտնի վարդապետութեան հանդէպ նորահնար կարծիքներ ստեղծել և անոր զսեմ զաղափարները թիւրել, և կարծել թէ մի միայն Հռովմէական Եկեղեցիէն պէտք է փրկութիւն ակնկալել։

Այն տեսակ կարծիք մը քաղաքական ձգտութիւններէն յառաջ եկած մի դրութիւն է, զոր մերժեց և կը մերժէ միաձայնութեամբ Արևելեան հնագոյն Եկեղեցեաց խումբը, և որ բաժանմանց և պառակտմանց պատճառ եղաւ Արևմտեան Եկեղեցեաց մէջ։ Իրաւ է որ այդ դաւանաբանութիւնը ուղեց իւր սերմը գտնել Աւետարանի մէջ, բայց այնչափ կամաւոր հասկացողութեամբ և անչափ տկար պատճառաբանութեամբ որ իր շրջանակէն դուրս չկարաց ընդունելի ընծայել իւր վարդապետութիւնը, և միայն արտաքին շահուց զօրութեամբ յախողեցաւ փոքրիկ հատուածներ կազմել ասու և անդ։

Նոր տետրին հեղինակն ալ իր Հռովմէադաւան վարդապետութեան նոր փաստաբանութեանը կը ձեռնարկէ և կը կարծէ թէ մեր Եկեղեցւոյ Ս. Հայրիք ճանցած ըլլան զայն և իրենց զրութեանց մէջ դաւանած։ Կը յանդգնի նոյնիսի բոել թէ «Վանայ նորագարձ ժողովրդեան պէս Լատինադաւան էր մեր Ս. Գրի. զոր Խուսաւորիչ Հայրն ալ, որ եղեւ հիմադիր Հայոստանեալց Եկեղեցւոյ», և առջեւ կը բերէ ինչ ինչ խօսքեր՝ քաղելով մեր նախնեաց զիրքերէն։ Ստիան մեր Եկեղեցւոյ Ս. Հայրիքը չէին կրնար ինքնահնար վարդապետութիւններ և դաւանանքներ ստեղծել, երբ Քրիստոս անանկ ըստած չէր և Առաքեալները անանկ քարոզած չէին։ Իսկ նոր Կտակարանը իր ամբողջութեամբ և Քրիստոս Նէական Եկեղեցւոյ պատմութիւնը իւր հնութեամբ մեզ ցուց կուտան թէ կամայական է Պետրոսի Առաքելուկան պաշտօնը Առաքելականէն վիր աստիճանի մը բորձացնելու ճիզր։

Մատթէոսի Աւետարանին մէջ (Մատթ. Փ. 2. 18-19) կը կարդամք այն ճշմարիտ դաւանութիւնը զոր բոլոր Առաքեալներուն կողմէն արտասանեց Պետրոս թէ «Դու ես Քրիստոս Արդի Աստուծոյ կենդանւոյ», առ որ Յիսուս պատասխանեց, «Երանի քեզ Սիմոն որդի Յովաննու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է։ Եւ ես քեզ ասեմ զի դու ես Վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ և դրունք գժոխուց զնա մի՛ յալթահարեսցեն։ — Այս խօսքերը Լատինամիտ Վարդապետաց առիթ եղած են զանազան ենթադրութիւններ ընելու, և կերպով մը Քրիստոսի խօսքերը այլուր լիլու, որպէս զի Պետրոսական և Պատական գերիշխանութիւն մը ստեղծուի։ Քրիստոս պարզապէս յանուանէ կոշած է զՊետրոս, «Դու ես Պետրոս», ինչպէս Յոյն բնագիրն ունի, յորում լաւ կը տարբերին Պետրոս և Պետրա արտկան և իգական անունները, «որք յԱսորականն Կիվառ և ի Հայականն Վ.Լ. մթարդանուած են անխտաբարձ։ Հետհաբար Քրիստոս Արմանին կանուխէն արուած (Յովհ. Ա. 42) Պետրոս անունէն առիթ կ'առնու վէմք օրինակը քաղելու, և այդ վիմին վրայ, կ'ըսէ, «Պիտի շինեմ Եկեղեցիս»։ Ո՞ր վէմին վրայ, Պետրոսի։ Ո՞չ, այլ այն ճշմարիտ վէմին վրայ, զոր Պետրոս դաւանեցաւ ըսելով «Դու ես Քրիստոս կենդանի Աստուծոյ Արդին» և յետոյ իր թղթոյն մէջ բացայաց քարոզեց թէ նա ինքն Քրիստոսն է «Վէմ կենդանի և Վ.Լ. ընտիր զուլս անլիւան պատուական» (Ա. Պետ., Բ. 4-6)։ Աւրեմ Քրիստոնէական Եկեղեցին կենդանի Աստուծոյ Արդւոյն Քրիստոսի վրայ շինուած է, և այս իմաստը միայն Աւետարանի ոգոյն համաձայն է։ Եթէ ուրիշ ենթադրութիւններ յերիւրէինք, այն ատեն Քրիստոսի Եկեղեցին շատ փոքրիկացուցած պիտի լինէինք, մինչդեռ Եկեղեցին՝ զՔրիստոս իրեն հիմ անուանելով շատ բարձր է, և որ և է մանկանացու էակի մը վրայ շինուած տկար հաստատութիւն մը չէ։ Աւետարանին նոյն տեղը կը գտնեմք որ Պետրոս «Սատանայ» կը կոչուի (Փ. 23)։ Անոնք որ անուններու և կոչումներու վրայ կը խազան, թերևս Եկեղեցին Սատանայի վրայ հիմուած պիտի ըսեն, այլ մեզ քա՞ւ լիցի, այսպիսի անճան պատճառաբանութիւններու և մեկնութիւններու հետեկի։

Պէտք է Աւետարանի ոգին լաւ ըմբռնենք որ Քրիստոսի ոգին է, Քրիստոսի Առաքելոց մէջ մեծ ու պատիկ չկար, այ ամէնքը հաւասար էին։ Պէտք

չէ մոռնալ որ երբ Առաքելոց մէջ մեծութեան և առաջնութեան խնդիր ծագեցաւ, Քրիստոս անոնց մէջէն խպառ հեռացուց այդ մատածումը։ Գեղեցիկ մէկ կար է այդ որ նոյն տեղ մեր առջև կ'ելնէ, և լուսաւոր կերպով ցոյց կուտայ թէ նախընթացաբար (Մատթ. ֆ. 27) Քրիստոսի առ Պետրոս ուղղած խօսքին մէջ, հարկաւ առանձնաշնորհումի մը և զերիշխանութեան մը խնդիր բնաւ երբեք տեղի ունեցած չէր, ապա թէ ոչ չէին զար հարցնել աշակերտները՝ թէ ո՞վ իցէ ի մէջն մեծ յարքայութիւնն երկնից (Մատթ. ֆ. 1): Եւ որովհետեւ Առաքելոց մէջ տարբերութիւն չկար, անոր համար կանխաւ ի գէմա Պետրոսի ամենուն խոստացուած իշխանութիւնը (Մատթ. ֆ. 19), այս անգամ ուղղակի և հաւասարապէս ամենուն կը տրուի, Եկեղեցին կառավարելու, կապելու և արձակելու իշխանութիւնը, և ո՞չ թէ միայն Պետրոսի, ո՞մէն ասեմ ձեզ, զոր կապեցէք յերկրի, Եղիշեցի կապեալ յերկինս, և զոր արձակեցէք յերկրի, Եղիշեցի արձակեալ յերկինս (Մատթ. ֆ. 18): Յիսուս իւր բոլոր կենաց մէջ աշակերտաց ամբողջը հաւասարապէս հրահնագեց, և ոչ թէ միայն Պետրոսի, և հուսկ ուրեմն զերշին բաժանման ատեն ամենուն հաւասարապէս միենոյն առաքելութեան պաշտօնը տուաւ (Մատթ. ի. 19-20): Աւատացանելու և վարդապետական իշխանութիւնը աշակերտաց ամբողջին տրուեցաւ, և ո՞չ թէ Առաքելոց մէջէն մէկուն կամ միւսին. Աւետարանի ամէն մէկ էջէն նոր դասեր մեր առջև կ'ելնեն, և անոնց մէջ կը առնեմք միշտ որ Քրիստոսի Եկեղեցւոյ հիմք շատ հաստատուն է, որովհետեւ Քրիստոս ինքն է այն, և աշխարհի մէջ Եկեղեցին ո և է մարդկային անհատի չպիտի կապուի, այլ միայն Քրիստոսի, որ Քրիստոնութեան և անոր Եկեղեցւոյն հիմն ու հիմնադիրն, և զլուխն ու պետն է: Ի գէպ է յիշել նաև Զեբեգէսոփ երկու որդւոց առաջարկը, երբ կը խնդրէին Քրիստոսի աջ և ձափ կողմերը նստիլ, և միւս Առաքեալներէն բարձրագոյն դիրք մը զրաւել, Քրիստոսի պատասխանը մերժողական եղաւ, և հեռացուց անոնց միտքէն զերիշխան լինելու զաղափարը: Քրիստոս մինչև իսկ ըստաւ, թէ ինքն իսկ շի կրնար տալ Առաքելոց մէջ մէկուն միւսին վրայ աւելի իշխանութիւն ունենալու առանձնաշնորհումը (Մատթ. ի. 23): Ո՞ւր կը մայ ուրեմն Պետրոսի արուելիք կամ արուած զերիշխանութիւնը, եթէ Առաքելոց մէջէն կը զանուէին երկու եղբայրներ, որք գեռ բարձր դիրք մը ստեղծել կը խորհին և այսպիսի խորհուրդին անտեղի լինելը կը լսեն:

(Եարութակելի՝ 1)

ՄԱԿԱՐԻԱԿԱՐՔ ՕՐՄԱՆԵԱՆ

